Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԻՆԺ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ԿԱՊԱՑՔՆԵՐԻ
ԻՒՃԻ ՎՐԱ ԴԱՐՍՈՒՄՆ

135

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ԷՆԳՐԿՈՎԿՈՄՍԵՏԸ ՑԵՐԿԷԹՓԻ 4-ՐԴ ՇՐՋԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ
Издание отдела техпропоганды 4-го района ЗКБ. ж. д.
ԼԵՆԻՆԱԿԱՆ
19 $\frac{18}{VIII}$ 32 р.

21.03.2014
625.17
Գ-13
13.803

ԿԱՊԱՑՔՆԵՐԻ ԽԻՃԻ ՎՐԱ ԴԱՐՍՈՒՄՆ

Ա. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

§ 1. ԿԱՊԱՑՔՆԵՐԻ ԽԻՃԻ ՎՐԱ ԴԱՐՍՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Այն ուղեմասերում վորտեղ վերակառուցման յենթակա չեն կապացքները խիճի վրա յեն դնում, վորպեսզի. ա) ուժեղացնեն կապացքը, բ) կապացքների իջվացքը պակասացնել և գ) ռելսերի խաղացքը պակասացնեն ուստի և գծի պահպանումը եժանացնեն։

Վերակառուցվող ուղեմասերում վորտեղ ամբողջ գիծը պետք է խիճի վրա դարսվի, բայց խիճի պակասության պատճառով առաջին հերթին կապացքներն են դարսում խիճի վրա վորպես գծի ավելի պատասխանատու մաս։ Մինչև կապացքները խիճի վրա դարսելը պետք է ամպատճառ առողջացվի ամբողջ գծի պատատը (полотно), *այսինքն վոչնչացվի խճավազի տաշտակները և գծի ուռուցքը* (пучины) *յեթե այդպիսիները գոյություն ունեն։ Այն ուղեմասերում վորտեղ նախատեսված է ռելսերի ընդհանուր նորոգում կապացքները պետք է խիճի վրա դարսվի այդ աշխատանքը կատարելուց հետո։*

Խիճը պետք է համապատասխանի ծ. ժ. կ. (Н. К. П. С.) *տեխնիկական պայմաններին։*

§ 2. ԽԻՃԻ ՇԵՐՏԻ (слой) ՀԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Կապացքները խիճի վրա յե դարսվում վոչ ամբողջ խճավազի շերտի հաստությամբ, այլ միայն 0,20 մետր շպալի հիմքից թողնելով խիճի տակ 0,20 մետր խճավազի շերտ։ Յեթե տվյալ ուղեմասում խճավազի շերտը պակաս է և չի գերազանցում 0,30 մետրի, այդ դեպքում խիճի տակ թողնում են 0,10 մետր խճավազի շերտ, վորը ժամանակի ընթացքում պետք է ավելացվի մինչև 0,20 մետր, խիճի տակի խճավազի շերտը 0,10 մետրից պակաս չի թույլատրվում։

§ 3. ԽՃԱՎԱԶԻ ՊՐԻԶՄԱՅԻ ԼԱՅՆՔՍԻ ԿՏՐՎԱՑՔԸ

Խիճը պետք է դարսվի փոխվող խճավազի ամբողջ լայնությամբ (գծ. 1)։



Գծ. 1. Կապացքը խիճի վրա (լայնքսի կտրվացքը և մի գծտնի ուղիի հատակագիծը)։

§ 4. ԿԱՊԱՑՔԻ ՅԵՐԿԱՅՆՔՍԻ ԿՏՐՎԱԾՔԸ

Խիճի շերտը դարսվում է ամեն կողմից յերկու շպալի տակ այնպես, վոր ըմբռնում է ընդամենը 4 շպալ, յերկուսը կապացքային և յերկուսը մինչկապացքային, ըստ գծ. 2։



Գծ. 2. Կապացքը խիճի վրա (յերկայնքսի կտրվացք)

§. 5. ԽՃԱՎԱԶԻ ՇԵՐՏԻ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ

Մինչ խիճի դարսման աշխատանքներն սկսելը հարկավոր է մանրամասն հետազոտել խճավազի շերտի դրությունը, քանակը և գծի պատատը, այդ հետազոտումը պետք է կայանա հետևյալում.

1) Պետք է կազմել խճավազի կտրվածքը (профиль) չափելով լայնքի յերեք տեղ, գծի առանցքում և խճավազի առերում (бровка) իսկ յերկարությամբ ամեն մի 2 ողակից վորից հետո այս ստացված տրվտվյալներով կազմվում է խճավազի պրոֆիլ, 2) հաստատել խճավազի ներքին շերտի պիտանի լինելը։

§ 6. ԱՆՊԵՏՔ ԽՃԱՎԱԶԻ ՓՈԽՈՒՄԸ

Այն դեպքում յեթե խճավազը այնքան անպետք է լինում, վոր այլևս չի կարող ծառայել իր մեջ մեծ տոկոս հող և կավ ունենալու պատճառով (վոչ ավել 15%) այդպիսիները փոխվում են նորով, և հինը անպատճառ պետք է թափեն առերից ներքև վորպեսզի նորի հետ չխառնվի։

§ 7. ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Աշխատանքների սկսելուց անմիջապես առաջ պետք է կատարվի հետևյալ նախապատրաստական աշխատանքները.

ա) Ռելսների արանքների բացատումն (разгонка) և կապացքներին ուղղահայաց դիրք տալը։

բ) Կապացքի շպալներին ուղղահայաց դիրք տալը ռեյկայի միջոցով։

գ) Կապացքի և նախկապացքի շպալների փոխումը յեթե այդպիսիները փչացած յեն։

դ) Կապացքներից ջրի արտուղումն (отвод)։

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

§ 8. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Մինչև աշխատանքների սկիզբը ռայոնի գծի բաժինը պետք է կազմի աշխատանքի նախագիծ, վորով կվորոշվի նյութեղենի կարիքի քանակը, ժամանակը և տեղափոխման ժամանակը։

Այդ նախագիծը պետք է հաստատվի ռայոնի գծի պետի կողմից, վորից հետո ուղարկվում է ուղեմասի պետին տեխնիկական խորհրդակցության, մշակելու գծի վարպետների հետ միասին։

Աշխատանքի մեթոդի հետ պետք է ծանոթանան բոլոր բանվորները գծի վարպետների հետ միասին։

Պետք է հատուկ ուշադրություն դարձնել խիճի վագոններից թափելուն, վորպեսզի խիճը թափվի կապացքից ամեն մի կողմը վոչ ավել 3 շպալից ավելորդ ծախսերից խուսափելու համար։

Խիճը դարսելու աշխատանքներին ղեկավարում է ԴՊ-ն և ԴՊԴ-ն։

Աշխատանքների ամեն կողմից պետք է դնել կարմիր ազդանշան և ճայթուկներ (петарда)։ Բացի սրանից աշխատանքի վայրում ևս պետք է դնել կարմիր ազդանշան։

Գնացքների արագությունը պետք է պակասեցվի մինչև 15 կիլ/ժամ։

§ 9. ՇԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Խիճի դարսումը բաժանվում է 4 հիմնական աշխատանքների.

1. Խճավազի հանումը մինչև շպալի հիմքը։
2. Խճավազի փոխարինելը խիճով շպալի հիմքից ցած։
3. Շպալների միջի տարածությունները խիճով լցնելը։
4. Աշխատանքի վերջնական ավարտումը։

§ 10. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԸ ՈՊԵՐԱՑԻԱՆԵՐԻ

Ամեն մի հիմնական աշխատանք բաժանվում է մի շարք ոպերացիաների։

1. Խճավազի հանումը մինչև շպալի հիմքը.
   - ա) Խճավազի հանումը ամբողջ լայնությամբ։
   - բ) Հանած խճավազի հարթումն (планировка) առերի վրա (на бровке)։
2. Խճավազի փոխարինելը խիճով շպալի հիմքից ցած.
   - ա) Շպալի տեղափոխումը հարևան արկղը (шпальный ящик)։
   - բ) Խճավազի հանումը շպալի հիմքից ցած։
   - գ) Խճավազի փոխումը խիճով շպալի հիմքից ցած տուփանելով (утрамбовка)։
   - դ) Շպալի հետ յուր տեղը դնելը։
   - ե) Տեղը դրած շպալի տակ հարումն (подбивка)
3. Շպալների միջի տարածությունը խիճով լցնելը.
   - ա) Արգուկումն (рехтовка)
   - բ) Միջի տարածությունը խիճ լցնելը։
   - գ) Խիճի հարթելը և տոխանելը։
4. Աշխատանքի վերջնական ավարտումը.
   - ա) Գամերի ամրացումը։
   - բ) Առերի հարթելը (оправка бровок)։

§ 11. ԱՐՏԵԼԻ ԿԱԶՄԸ, ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՅԵՎ ԳՈՐԾԻՔՆԵՐԸ

Աշխատանք կատարող արտելը կազմված է լինում 14 հոգուց, վորից 12-ը հիմնական աշխատողներ են, իսկ 2 նշանատուներ արտելապետի անմիջական ղեկավարությամբ։

Աշխատանքի դուրս գալուց առաջ արտելը բաժանել 3 մասի 4 հոգուց բաղկացած և ամեն մի բանվորի հատկացվում է համար, իսկ 2 բանվորներ նշանակվում են նշանատուներ աշխատանքի սկզբին և վերջին։

Արտելը խմբակների բաժանելուց հետո ամեն մի խմբակին տրվում են հետևյալ գործիքները՝

1. Ցերկաթյա բահեր . . . . . 4 հատ
2. Խիճի յեղաններ . . . . . 2 »
3. Թեթև տափանիչներ (ручные трамбовки) . . . 2 »
4. Մետաղյա փակհարներ (подбойки) . . . . . 4 »
5. Լինդ (лом) թաթաձև . . . . . 2 »
6. Մետաղյա ճանկեր (скобы для сдвижки шпал) 2 »
7. Գծի շաբլոն . . . . . 1 »
8. Գամե մուրճեր . . . . . 1 »
9. Մեկ արկղ 40 հատ գամով . . . . . 1 »
10. Ճանկեր լինդի գիծը կարելու համար . . . . 1 »
11. Հարթաչափ (уровень) . . . . . 1 »
12. Շամի փայտից սեպեր շպալը բարձրացնելու համար գնացքները անցնելուց . . . . . 4 »

Բացի սրանից ամեն մի արտել պետք է ունենա՝

1. Գծի վագոնչիկ . . . . . 1 հատ
2. Նշանտուբի յեղջյուր . . . . . 3 »
3. Ձեռքի ազդանշան . . . . . 1 կոմպլ.
4. Կարմիր սկավառակ (դիսկ) . . . . . 3 հատ
5. Կանաչ սկավառակ . . . . . 2 »
6. Ճայթուկ (петарда) . . . . . 2 արկղ

§ 12. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼԸ

Աշխատանքի յելնելուց նշանատուների մեկը մնում է իր նշանակած տեղը չհասած աշխատանքի վայրին, իսկ մյուսը անցնում է աշխատանքի վայրից մյուս կողմը։ Արտելապետը բաժանելով 3 խմբակի՝ ամեն մի խմբակը կանգնում է մի կապացքի վրա կատարելով միանման աշխատանք։

1. Խճավազի հանումը մինչև շպալի հիմքը։ Այդ աշխատանքը կատարվում է միաժամանակ ամբողջ կապացքի տարածությամբ № 1 և 2 բանվորները հանում են խճավազը, իսկ № 3 և 4-ը հարթացնում են տաբերի վրա, ավելորդ խճավազը թափելով տաբերից։

2. Խճավազի փոխարինումը խիճով շպալի հիմքից ցած։ Այս աշխատանքը կատարվում է ոչ թե միանգամայն ամբողջ կապացքի տարածությամբ, այլ կապացքը բաժանվում է 8 մասի ըստ գծ. № 3։



Գծ. № 3. շպալների տակի տարածության բաժանումը մասերի

Աշխատանքը սկսվում է առաջի մասից։

Այն ժամանակ № 3 և 4 բանվորները վերջացնում են խճավազի հարթացումը տաբերի վրա № 1 և 2 բանվորը տեղափոխում են շպալը հարևան արկղը, որից հետո սկսում են խճավազի հանումը 1-մասից թողնելով խճավազի համար տակոս 2 : 1 ըստ գծ. № 3։

№ 3 և 4 բանվորները հարթացնում են նոր հանած խճավազը։

Խճավազը հանելուց հետո տակի մակերեսը պետք է տափարեցնել։

Սրանից հետո ամբողջ խումբը այսինքն № 1, 2, 3, 4 բանվորները անցնում են խիճ լցնելուն, բայց № 3 և 4 լցնում են խակ, 1 և 2 տափացնում, որից հետո շպալը դրվում է տեղը տակհարում և ամբողջ խումբը անցնում է հետևյալ 2-րդ մասին։

Այս մասում աշխատանքը նույնն է, բացի շպալի տեղափոխումից հետևյալ մասերը նույնանման աշխատանք է։

Գնացքների անցնելու նախազգուշության համար չի թույլատրվում մինչև մի մասը խիճով լցնելը, հանել մյուս մասից խճավազը։

4. Շպալների միջի տարածությունը խիճով լցնելը, վերոհիշյալ աշխատանքները կատարելուց հետո գիծը պետք է արդակվի (рехровка) և տակհարվի (подбывка) որից հետո շպալի միջի տարածությունները լցվում են խիճով և ամուր տափարեցնում։

4. Վերջնական ավարտումը։

Բոլոր 3 հիմնական աշխատանքներից հետո գիծը պետք է կարվի շաբլոնով և ամրացվի գամերը, փոխելով այդպիսիները յեթե այդպիսին գոյություն ունի։

§ 13. ԳՆԱՑՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Այս աշխատանքների ընթացքում ամեն մի ժամանակ քանդած կլինի միայն մի մաս (շպալի տակը կամ կողքին) կամ մի հատ տեղափոխած շպալ, բայց գնացքները անցնելու համար հարկավոր է հետևյալը՝

1. Այն տեղերում յերբ շպալը տեղափոխված է պետք է նրա տեղը մոտեցվի մի ուրիշ նոր շպալ, որի վերջավորություններին մոտեցվում է մի մի հատ շամի սեպեր և պինդ ամրացվում։
2. Բոլոր շպալները պետք է տակհարված լինեն։

§ 14. ՄՈՏԱՎՈՐԱՊԵՍ ԲԱՆՈՒԺԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

№№	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Մեկ կապացքի նորմա մարդա-բուպեներով
	I. Խճավազի հանումը մինչև շպալի հիմքը	
1	Խճավազի հանումը	20
2	Հարթացնելը	20
	Ընդամենը I մասում	40

13.803

	2 Խճավազի փոխարինումը խիճով ջրալի հիմքից ցած	
3	Շրալի փոխադրումը հարևան արկղը	6
4	Խճավազի հանումը շրալի հիմքից ցած հարթելով .	66
5	Խճավազի փոխարինումը խիճով տոփարելով . . .	80
	Շրալի հետ քցելը իր տեղը	8
	Շրալի տակհարելը	48
	Ընդամենը II մասում	202
	3. Շրալների սիջի տարածությունը խիճով լցնելը	
8	Արդակումն	3
9	Խիճի լցնելը արկղը }	28
10	Հարթելը և տոփարելը }	
	Ընդամենը III մասում	31
	4 վերջնական աշխատանքի ավարտումը	
11	Գամերի ամրացնելը	2
12	Առերի ուղղելը	10
	Ընդամենը IV մասում	12
	Ընդամենը հիմնական աշխատանքին	285
13	Ազդանշան կանդնեցնելը	60
14	Գնացքների բաց թողնելը	20
15	Աշխատանքի վայրը գալը և վերադառնալը	40
16	Բանվորական պարապուրդ և հանդիստ	15
	Ընդամենը մի կապացքին	420

Մեկ կիլ. համար բանուժի քանակը հավասար կլինի (ռելսների յերկարության 12,5 մետր) հետևյալ մարդա որի։

$$\frac{420}{8 \times 60} \times \frac{1000}{12,5} = 70 \text{ բանվորական որ։}$$

§ 15. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԳՆԱՑՔՆԵՐԻ ՔԻՉ ԼԻՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ

Յեթե գնացքների թիվը շատ չե, այսինքն յեթե գնացքների առանցքը մի ժամից ավել ե, թույլատրվում ե կապացքը բաց անել 8 մասի փոխարեն 2 մասի։ Այդպիսով առաջ փոխվում ե կապացքի մի մասը, յետո յերկրորդ։ Աշխատանքների ձևը մնում ե նույնը։

Ինժ. Գաբրիելյան

ՀՀ Ազգային գրադարան
NL0575466